Տիրոջ նվիրաբերման օրենքը

Վարդապետություն և Ուխտեր 42.30, 38–39

Վարդապետություն և Ուխտեր 78.3–7

Վարդապետություն և Ուխտեր 105.1–5

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը բացատրել է.

Տիրոջ նվիրաբերման օրենքը (տես օրինակ՝ Վ&և Ու 42.32, 53) . . . կապված է տնտեսության հետ, սակայն ավելին է, քան տնտեսությունը՝ այն սելեստիալ օրենքի կիրառումն է կյանքում՝ այստեղ և հիմա (տես Վ&և Ու 105.5): Նվիրաբերել նշանակում է մի սուրբ բան ի սպաս դնել կամ նվիրագործել՝ նվիրել սուրբ նպատակի համար: Իրական հաջողությունն այս կյանքում գալիս է, երբ մեր կյանքը, այսինքն՝ մեր ժամանակն ու ընտրությունները, նվիրաբերում ենք Աստծո նպատակներին (տես Հովհաննես 17.1, 4, Վ&և Ու 19.19): Այդպես մենք թույլ ենք տալիս, որ Նա մեզ բարձրացնի՝ հասցնելով մեր ճակատագրի ամենաբարձր կետին: (Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Reflections on a Consecrated Life», *Լիահոնա,* նոյ. 2010, 16)

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆն ուսուցանել է.

Զոհաբերումն ու նվիրաբերումը երկու երկնային օրենքներ են, որոնց հնազանդվելու համար մենք ուխտ ենք կապում սուրբ տաճարում: Այդ երկու օրենքները նման են, բայց ոչ նույնական: . . .

Նվիրաբերումը տարբերվում է զոհաբերությունից առնվազն մեկ կարևոր մոտեցումով: Երբ մենք որևէ բան ենք նվիրաբերում, մենք չենք թողնում, որ այն սպառվի զոհասեղանի վրա: Ավելի շուտ, մենք այն օգտագործում ենք Տիրոջ ծառայության մեջ: Մենք այն նվիրում ենք Նրան և Նրա սուրբ նպատակներին: Մենք ստանում ենք տաղանդներ, որոնք Տերը տվել է մեզ, և ջանում ենք բազմապատկել դրանք, որպեսզի ավելի օգտակար լինենք Տիրոջ արքայության կառուցման գործին:

Մեզանից շատ քչերին երբևէ կխնդրեն *զոհաբերել* կյանքը Փրկչի համար: Բայց մենք բոլորս հրավիրված ենք *նվիրաբերել* մեր կյանքը Նրան: (Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Our Heartfelt All», *Լիահոնա,* մայիս 2022, 124)

Ո՞րն է նվիրաբերման օրենքը: Ինչպե՞ս է այն ազդում ինձ վրա:

Այսօր մենք այլ կերպ ենք ապրում այդ օրենքով: Օրինակ՝ մենք ծառայում ենք ուրիշներին, ընդունում ենք կոչումներ և առաջադրանքներ Եկեղեցում և դրա համար անում ենք հնարավոր ամեն բան, ինչպես նաև վճարում ենք լիարժեք տասանորդ և ծոմի առատաձեռն նվիրատվություններ: Երբ մենք անում ենք այն, ինչ մարգարեներն ու Սուրբ Հոգին են հրահանգում են մեզ անել՝ Աստծո արքայությունը կառուցելու և կարիքավորներին օգնելու համար, մենք ապրում ենք նվիրաբերման օրենքով: («Ո՞րն է նվիրաբերման օրենքը Ինչպե՞ս է դա ազդում ինձ վրա», *Երիտասարդներին զորացնելու համար*, ապրիլ. 2021, 31)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_613-1